ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ

2025թ. ապրիլի 4 -ին, N 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենքի 5–րդ հոդվածի 3–րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 549-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 2.1 կետի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2025 թվականի ապրիլի 17-ից 18-ը ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «ՀՀ Արագածոտնի մարզում ուժեղ երկրաշարժի ծագման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով:
2. Ուսումնավարժությանը ընդգրկել՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը, Արագածոտնի մարզպետի աշխատակազմին, մարզի ծառայություններին և մարզային տարահանման հանձնաժողովին:
3. Նշանակել՝
   1) ուսումնավարժության ղեկավար ՝ ՀՀ Արագածոտնի մարզպետին,

2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալին,

3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետին,

4) գործնական աշխատանքների ղեկավար՝ մարզային փրկարարական վարչության պետի տեղակալին:

4. Հաստատել՝

1) հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված N 2-ի:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2025 թվականի մարտի 17-ը ներկայացնել ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

3) մինչև 2025 թվականի ապրիլի 16-ը զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին,

4) ուսումնավարժության ավարտից հետո եռօրյա ժամկետում ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել անցկացման արդյունքների վերաբերյալ ամփոփագիրը:

6. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել ներգրավվող բոլոր ուժերի մասնակցությունը ուսումնավարժությանը,

2) հաստատել գործնական միջոցառումների պլանը,

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավվող ուժերի հետ գործնական միջոցառումների տեղամասերի նախապատրաստման հարցերով,

4) ապահովել իրականացվող գործնական միջոցառումների ընթացքում անվտանգության կանոնների պահպանումը մասնակիցների կողմից: Կանոնների

խախտման դեպքում անհապաղ դադարեցնել իրականացվող գործողությունները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝
   1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,
   2) ուսումնավարժության անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները,
   3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին,
   4) ուսումնասիրել «ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում գործողությունների» պլանի «ՀՀ Արագածոտնի մարզում ուժեղ երկրաշարժի ծագման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում» հավելվածը, ինչպես նաև «ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության տարահանման պլան»-ը և այլ իրավական ակտեր, որոնք առնչվում են ՀՇՈՒ-ի թեմայի հետ:
8. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 4/7/2025 11:16:08 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2025թ. 04.04 թիվ 604 որոշման

ԿԱԶՄ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում Անուն, ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ գնդապետ Մ. Ասատրյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ
Խաղարկման խումբ			
2	Խմբի ղեկավար	փ/ծ մայոր Ա. Մելիք-Ստեփանյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ
3	Խմբի անդամ	փ/ծ մայոր Ա. Հարությունյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
Վերլուծության նախապատրաստման խումբ			
4	Խմբի ղեկավար	փ/ծ փոխգնդապետ Հ. Մուրադյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ
5	Խմբի անդամ	փ/ծ մայոր Գ. Ավագյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ
Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ			

6	Խմբի ղեկավար	փ/ծ փոխգնդապետ Ա. Շամիրյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
7	Վթարավերականգնողական աշխատանքների ղեկավար	փ/ծ գնդապետ Հ. Հակոբյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի ՀՓՋ հրամանատար
8	Փրկարարական աշխատանքների ղեկավար	փ/ծ ավագ լեյտենանտ Վ. Ղազարյան	Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի ՀՓՋ հրամանատարի տեղակալ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Recoverable Signature

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ձև 2

Հավելված N 2

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2025թ. 04.04 թիվ 60-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՀՀ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1. Կազմակերպչական միջոցառումներ				
1.	Ելակետային տվյալների որոշում ուսումնավարժության մտահղացման մշակման համար	մինչև 14.02.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
2.	Ուսումնավարժության անցկացման վայրի տեղազննության կազմակերպում	մինչև 18.03.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
3.	Ուսումնավարժության նախապատրաստման ուղղությամբ խորհրդակցության անցկացում	մինչև 21.02.2025թ.	Ուսումնավարժության ղեկավար	
2. Ուսումնավարժության փաստաթղթերի մշակում				

1.	Ուսումնավարժության մտահղացման մշակում	մինչև 24.02.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
2.	Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում	մինչև 25.02.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3.	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	մինչև 23.03.2023թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3. Ուսումնավարժության վայրի և մասնակիցների նախապատրաստում				
1.	Ուսումնավարժության տեղամասերի նախապատրաստում	մինչև 31.03.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
2.	Ուսումնավարժության մասնակիցների հետ պարապմունքների անցկացում	մինչև 14.04.2023թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3.	Ուսումնավարժության մասնակիցներին անվտանգության կանոնների հետ ծանոթացում	մինչև 14.04.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
4.	Զեկույց ուսումնավարժության ղեկավարին ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին	16.04.2025թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբ	

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

27.03.2025

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ